

Արձանագրություն N 1-05/20

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորատի 2020թ.

մայիսի 18-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Գրիգորյան Թ.Գ., Առաքելյան Ա.Ա., Ավանեսյան Է.Վ., Շահբազյան Ա.Վ., Հակոբյան Ռ.Ս., Մուսայելյան Վ.Ս., Ավետիսյան Ս.Ա., Հարությունյան Մ.Ա., Հարությունյան Ա.Կ.:

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ., դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ., «Մաթեմատիկա» առարկա դասավանդող դասախոսները և միջին մասնագիտական կրթության կուրսղեկները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանում մաթեմատիկայի դասավանդման խնդիրները:

Լսեցին - Շուշիի տեխնոլոգիական համալսարանում մաթեմատիկայի դասավանդման խնդիրների մասին զեկուցեց ուսումնական աշխատանքների գծով ռեկտորի տեղակալ, «Տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ռ.Հարությունյանը: Նշվեց, որ ուսանողները մաթեմատիկայի տարրական գիտելիքները, որ պետք է դպրոցներում ստանային, չունեն և այդ բացը կարճ ժամկետում լրացնելը անհնար է: Օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն մեթոդները, քայլեր են ձեռնարկվում ուսանողներին սովորեցնել, և՛ նախկինում բաց թողնվածը, և՛ ուսումնական պլանով նախատեսված դասընթացները: Սակայն, որոշ դասախոսներ, ինչպես նաև ուսանողներ, անտարբերություն են ցուցաբերում խնդրի կարևորության նկատմամբ:

Արտահայտվեցին - Ռեկտոր՝ Հ.Վ. Թոքմաջյան: Հնչեցվեց հարցեր, մասնավորապես, եթե ուսանողները չեն տիրապետում մաթեմատիկայի տարրական գիտելիքներին, ինչպե՞ս կարող են յուրացնել բարձրագույն մաթեմատիկական և ինչու՞ առանց հիմքերը սովորեցնելու անցնում եք առավել բարդ դասընթացներ, նախապես իմանալով, որ դրանք չեն յուրացվելու: Ռ.Հարությունյանը պատասխանեց, որ իրենք առաջնորդվում են հաստատված ծրագրերով: Զեկուցողը ներկայացրեց նաև հնչեցված այլ հարցերի պատասխաններ, որոնք հարցատուի կողմից գնահատվեց ոչ հիմնավոր:

Որոշեցին - Հանձնարարել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ռ.Հարությունյանին. «Մաթեմատիկա» առարկան դասավանդող դասախոսների միջոցով և կուրսղեկների օժանդակությամբ եռօրյա ժամկետում ապահովել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի միջին մասնագիտական կրթության և բակալավրի առկա ուսուցման համակարգի բոլոր խմբերում մաթեմատիկայի տարրական գիտելիքների էքստոն ստուգումներ և արդյունքները ներկայացնել ռեկտորատ:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թոքմաջյան

Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան